

ՍՏԱԼԻՆԸ
ԶԵՅ ԱՃՈՒՊԱՆԵՐԻ
ՅԵՐԳԵՐՈՒՄ

891.99


Ղ - 86



Ժողովածուն նվիրվում է ժողովուրդների իմաստուն առաջնորդ, հայ ժողովրդի Մեծ բարեկամ

**ԻՌՍԻՖ ՎԻՍՍԱՐԻՆՈՎԻՉ
ՍՏԱԼԻՆԻՆ՝**

նրա ծննդյան վաթսուամյակի
առթիվ






891.99

U-86

by



06.08.2013

35878



300
40

Յ Ե Ր Կ Ո Խ Խ Ո Ս Ք

«Ստալինը հայ աշուղներին
 յերգերում» ժողովածուն կազմվել
 է դեռևս 1938 թվի վարնանը: Բնակա-
 նաբար ժողովածուի մեջ տեղ են գտել
 միայն մինչև այդ ժամանակաշրջանն
 ստեղծված աշուղական Ստալինյան յեր-
 գերը: Մեր ժողովրդի հոգատար հորը
 նվիրված աշուղական այս յերգերն իր
 ժամանակին տպագրվել են մեր պար-
 րերական մամուլում:

Հասարակությունն արդեն ծանոթ է,
 ինչպես աշուղ Աշխումն է ասում՝ «Ժո-
 ղովրդի սրտից բխած» աշուղական
 ջերմ, գունեղ այս յերգերին: Կազմելով
 է առանձին հրատարակության հանձնե-
 լով այդ յերգերը, մեր նպատակն է
 յեղել լայն մասսաներին տալ ընթերցա-
 նության սիրելի մի գիրք:

Կ Ա Ջ Մ Ո Ղ





ԱՇՈՒՂ ԳՐԻԳՈՐ

Հայկական եւ
Գերագույն հոր-
հրդի դեպոստ,
եփանեանակի:

I. ՋԱՆ ԱՏԱՆԻՆ

Քու նստում ես Մոսկվայում,
Ջան Ստա՛լին, ջան Ստա՛լին,
Յերկիրն անշեղ դեկավարում,
Ջան Ստա՛լին, ջան Ստա՛լին
Պողպատի նման Ստա՛լին:

Վրաստանի բույսն ես դու,
Մեր յերկրի լույսն ես դու,
Ժողովրդի հույսն ես դու,
Ջան Ստա՛լին, ջան Ստա՛լին:
Պողպատի կամֆով Ստա՛լին:



Մեր յերկիրն ես դու գարդարում.
 Զան Ստա'լին, ջան Ստա'լին,
 Մեզ դեպ կոմունիզմն ես տանում.
 Զան Ստա'լին, ջան Ստա'լին,
 Պողպատի նման Ստա'լին:

Բարի աչքով նայում ես մեզ,
 Զան Ստա'լին, ջան Ստա'լին,
 Խաղ ու տաղով յերգում եմք քեզ.
 Զան Ստա'լին, ջան Ստա'լին
 Պողպատից ամուր Ստա'լին:

1937 թ.



ԱՇՈՒՂ ԳՐԻԳՈՐ

ԻՍԿԱԿԱՆ ՊՈՂՊՍՏ ԵՄ, ՊՈՂՊՍՏ

Լենինի հետ դու միասին
 Իսկական պողպատ ես, պողպատ.
 Մեր աշխարհի լույսը բացիր,
 Իսկական պողպա'տ ես, պողպատ:

Սովորեցիր մեծ Լենինից,
 Դարձար նրան կուռ զինակից,
 Զվախեցար բանդ-ախարից,
 Իսկական պողպա'տ ես, պողպատ:

Լենինի հետ մտածեցիր,
 Զար բշնամուն ջախջախեցիր,
 Ժողովրդին ազատեցիր,
 Իսկական պողպա'տ ես, պողպատ:

Ժողովրդին դու սիրեցիր՝
 Մեզ ազատ կյանք նվիրեցիր.
 Աշխարհին նոր լույս բացեցիր,
 Իսկական պողպա'տ ես, պողպատ:

Գրիգորն է ուրախ յերգում,
 Մեր յերկիրն է ծլում, ծաղկում,
 Ստալինն է առաջնորդում,
 Իսկական պողպա'տ ես, պողպատ:

1938 թ.



ԱՇՈՒՂ ԱՇԽՈՒՅՓ

ՄՍԻՆՆԵՐԻ ԳՐԱՐԱՆԻ

Հայկական ԽՍՀ Գերագույն հորհրդի ընտրությունների ատրիվ
(Դասակ)

Ստալինյան արևներով հայ աշխարհի այս գարուն ժողովրդին բույր է սփռում ծաղիկներով զարդարուն. Ազգերի հետ յեղբայրության, խաղաղության դրոշի տակ— Ազա՛տ, ուրա՛խ կյանք են կերտում ամեն մի գյուղ, ամեն տուն:

Հայր Ստալին, մեր աշխարհը քո անունովն է յերդվում,
Հին փշերով խոցված սրտեր նոր վարդեր են կանաչում.
Քեզ վերհերի սպեղանի, ցավի դեղ են նանաչում
Ու քո մեջ է հպարտ ապրում ժողովուրդը մեր բեղուն:

Մեր աշխարհում թշվառություն ստեղծողն էլ չկա,
Բեկի, քյոյսվի ու դաշնակի ջարդ ու մորակն էլ չկա,
Ժողովրդի հողը, ջուրը, հացը խլողն էլ չկա,
Հայաստանը միշտ քեզ հետ է, դու մեր մայիս, մեր գարուն:



Արևաշաղախ հայ լեռները այստեղ գուզված ծաղիկանց մեջ—
Թույն ու տոքի ժանտից փրկված բույր են սփռում մարդկանց մեջ,
Մեր այս ազատ, վերածնված ժողովրդի սրտի մեջ
Քանի գնում խորանում է մեր նոր կյանքը վառվառն:

Դրա համար ժողովուրդը աղբյուրի պես հորդառատ՝
Մարից, ձորից, կալ ու դաշտից քեզ է յերգում վեհ, հպարտ,
Հանդ, գործարան, սովխոգ, կոլխոգ քո մարդիկդ հարագատ՝
Քեզանով են ծլում, ծաղկում, շնչում, ապրում հաստատուն:

Մրաբատյան փարթամ դաշտը վարպես կյանքի նոր պարտեզ
Կապուտաչյա Մեվանի հետ նոր փնջեր են կապում քեզ.
Մեր Լոռին ու Զանգեզուրը այստեղ բացված վարդի պես,
Քեզ են յերգում, կյանքի արև, մեր առաջնորդ, մեր գարուն:

Հայր Ստալին, քո որեհեմով այս գարնանը մեր աշխարհ
Ընտրում է իր գավակներից իշխանություն մի արդար,
Ու Գերագույն մեր հարիստի դրոշակը դարե-դար
Քո անվան հետ պիտի փայլե մեր աշխարհում մնայուն:

Ու Գերագույն հարիստի ընտրությունը մեր յերկրում,
Կյանքի գարուն, մտքի արև, սրտի սեր է մեզ բերում,
Ամեն կողմից հույս ու լույսի ավակներ են դողանջում
հարիստի առաջնորդի մտքից, սրտից կարկաչուն:

Յերբ նայում ենք մեր գծից դուրս, դարձյալ թունոտ նենգ ու դավ
Ներսնների ժառանգներն են այնտեղ ցանում սով ու մահ,
Դարձյալ արյուն ու կոտորած, մայր ու մանկան վիշտ ու ցավ
Բուրժուական զագանների ժանիքներից որն ի բուն:



Անհաղթ ուժ է ժողովուրդը ստալինյան աշխարհի,
Ալագյազը քաջ յեղբայրն է՝ Կագրեկ, Նլբբուս—սարերի,
Վուլգան, Դոնը և Ամուրը մեր գետերն են հայրենի,
Սիրում ենք մեր հայրենիքը վռնց Ստալինն իմաստուն:

Հայրենիքը կյանքի գարնան է լույսերով գեղեցիկ
Շենանում է, դրախտ դառնում հազար մրգով անուշիկ,
Պայծառ լույսեր, նոր ջրանցքներ, գործ, աշխատանք յերջանիկ.
Պայծառության խիճուկ են բերում մեր սրտին ու մեր հոգուն:

Խորհրդային բազմալեզու հզոր ազգը սրտագին
Քեզ է յերգում, քեզ է գովում, մեր ապավեն Ստալին,
Ուր անցել եմ՝ մեկ սիրդ դարձած բերաններից ջերմագին
Մաղթանքների ձայն եմ լսել կյանքիդ համար էն փայլուն:

Յես, Աշխույժս, մի հայ աշուղ, հայ աշխարհի սրտերից
Խաղաղության սերն եմ յերգում յեղևելով շատ փորձերից,
Մեր բազմանդամ ընտանիքից, ու յերջանիկ ժողովրդից
Վողջույնի ջինջ յերգ եմ ձոնում, քեզ, փրկարար, իմաստուն:



ԱՇՈՒՂ ԱՇԽՈՒՅՑ

Հ Ա Յ Բ Ս Տ Ա Ղ Ի Ն

(Մուխամմազ)

Դու մեր կյանքի միակ արև, դու մեր պահապան Ստալին,
Մեր սրտերի ամեն ցավի բժիշկ դեղ-դարման Ստալին,
Դու լույսերի գուլիս գործոց, մտքի արև խավարի դեմ,
Մեզ մուր ամպերին կործանող փայլուն ծիածան, Ստալին:

Վիշտն ու կարիք մեռավ մեր մեջ, յերկիրը դրախտ է այսօր,
Ուր նայում ես խիճուկ ու ծիծաղ, յերջանկության բախտ է այսօր.
Այդ հավատը մեր սրտերում միշտ վառ ու անխախտ է այսօր,
Վորպես հարատև արեգակ, անվերջ, հավիտյան Ստալին:

Արևելից մինչ Արևմուտք, հյուսիսից-հարավ, վողջ աշխարհ
Ազատության դաշտի վերա էն արևն է կապել կամար.
Դու բնության միակ նմուշ, դու միակ փրկիչ մեզ համար,
Ազատության արշալույս, մտքերի ովկիան Ստալին:

Խորաքափանց էն մտքերը իբրև գարնան մայիս մեր մեջ.
Վառման բույրի, անուշ հովի շողով են ման գալիս մեր մեջ,
Ամեն բույն կյանք ու արև, հույս ու սեր են տալիս մեր մեջ,
Դու մեր արև, դու մեր մայիս, դու մեր գարուն, ջան Ստալին:

Այս իմ յերգը ժողովրդի ջերմ սրտերն է էն դեմ բանում,
Վարովհեստև շատ եմ յեղել ամեն շրջան ու ավանում,
Աշխատավոր մարդկությունը, վորպես մեծ հայր՝ քեզ է պաշտում,
Նա իբ այս նոխ, ազատ կյանքով քեզ է պարտական, Ստալին:



Ազգ ու ցեղեր, արյան ծովից այսոր կյանքի դրախտն են հասել.
Նենգ ու դավի նահնից փրկված, ծաղկած բուրաստան են հասել.
Վող ազգերը յեղբայրացած, խնայադուքյան են հասել,
Հանուն ցանած քո սերմերի, բարի սերմնացան Ստալին:

Մրտիս համար լեզու չունեմ ամեն բարիքդ թվելու,
Սարեր-ձորեր հոգի առած գալիս են կյանքդ գովելու,
Այսոր աշխարհն է պատրաստված իր սիրուն ու հոգին քեզ տալու,
Այնքան դու վեհ ու ազնիվ ես, մեր հայր պատվական, Ստալին:


Ինչ փույթ, վոր գագան փաշիգմը չանկոնել կուզե յերկաթ կամֆիդ.
Կամ կատվի պես թաթ է մեկնում անվեհեր ու պողպատ կամֆիդ,
Միթե՞ այդ կույրը չի տեսնում, վոր աշխարհն է անհաղթ կամֆիդ
Հետը կապված մեկ մարդու պես, մեկ սրտի նման, Ստալին:

Կարմրադրոշ քո բանակը, վոր մեր ծոցից ենք քեզ տվել.
Լենինյան բարձր հաննարի հոգին նրա մեջն ես դրել.
Մեր գավակներ վոգեշնչված քեզնով հերոս են դառել.
Վոր ոճից ել վատ քշնամուն հակահարված տան, Ստալին:

Աշխույժ հոգիս լսել կուզե գեթ մի բույս ձայնդ ազդու,
Վող աշխարհին մեկ սիրտ դարձնող հայրական հրամանդ ազդու,
Կեցցե՛ փայլուն միտքդ կերտված, անխախտ հեռարանդ ազդու,
Կեցցե կազմդ բանակիդ հետ անմահ, անվախճան Ստալին:



300
40



ԱՇԽՈՒՅԺ

**ԺՈՂՈՎՐԴԻ ԲԱՐԵՎՆԵՐԸ ՀԱՅՐ
ՍՏԱՆԻՆԵՆ**

Ով դու պրովետարիատի մեծագույն հաննար,
Մեր ազգերից, ժողովուրդներից բարև քեզ,
Ծեր ու ջահել, աղջիկ, տղա անդադար,
Սիրող սրտից ջերմ բարև են մաղթում քեզ:

Մեր արտ ու բաղ նոր ջրերով վտոռգված,
Մարդկանց սրտեր պայծառ հույսերով լցված,
Սարեր, ձորեր ազատ ձեռքով զարդարված,
Խաղաղության ծաղիկներից բարև քեզ:

Մայրերը զգացված գրկում են վորդոց,
Դիմում մանկապարտեզ վարպես մի ծաղկոց,
Լեզու առած բոլոր մանուկները բոց
Ուղարկում են որոցքներից բարև քեզ:





Քն լույսի շողերը ծով աստեղի հետ
Շոյում են ծաղկունքը նոր հովերի հետ,
Խաղաղության ըմբոստ հոգիների հետ
Զոհվածների շիրիմներից բարև քեզ:

Հեռավոր Սիբիրից մինչև Կովկասը մեր
Հարյուրավոր ցեղեր ու ժողովուրդներ
Քն հոգով են լցված՝ դարձած յեղբայրներ,
Մեր ազգերի սրտի խորքից բարև քեզ:

Ցրվել են ամպերը, մեռել է խավար,
Մարդիկ պարզ տեսնում են ուղիղ հանապարհ,
Լենինյան շավիղով ընթացող հաննար,
Բաղդավորված քշվառներից բարև քեզ:

Վերացավ ծածկոցը կանանց դեմքերից,
Փրկվեցին լեզուները ժանդ կապանքներից,
Նրանց ձեռքի առատ անուշ բերքերից
Ու կոլտոգնիկ մեր կանանցից բարև քեզ:

Փառք վսեմ հաննարիդ, փառք ծով մտքերիդ,
Վոր համայն աշխարհն է փափագում սերիդ,
Շնորհիվ բեկեռախույզ քաջ բազեներիդ,
Հյուսիսային բեկեռներից բարև քեզ:

Դու մեր կյանքի որ ու արև հիմնովին,
Կոմունիզմի մեծ առաջնորդ Ստալին,
Փառք քո բոլոր կազմին, փառք քո բանակին,
Նրանց հեռու ծնողներից բարև քեզ:



Ա՛խ, թե ունենայի ձեռքիս մի գրիչ,
Փառքիդ համար կըզգրեյի, ո՛վ փրկիչ,
Իբրեւ մասսայի սրտի մոտ յերգիչ,
Աշխույժ սրտիս վառ յերգերից բարև քեզ:





ԱՇԽԱՏՅԺ

ՍՏԱՆԻՆԸ ԿՈՒՆՈՋ ԴԱՇՏԵՐՈՒՄ

Հե՛յ, քեզ մատաղ, ջան հոկտեմբեր,
Ինչ մեր պատվական հոկտեմբեր,
Ստալինի շնչով ծաղկած՝
Սիրուն բուրաստան հոկտեմբեր:

Ջան, յես մատաղ Լենին պապին,
Նրա սիրած Ստալինին,
Կոմունիզմի վառ աստղի տակ
Մլած ծաղկած հանդ ու դաշտին:

Յես աղջիկ եմ, յես ծաղիկ եմ,
Իմ յարի մոտ մի հատիկ եմ,
Հանուն մեր հայր Ստալինի
Բալտից ժիր կոլխոզնիկ եմ:



Կոլխոզնիկ եմ ուրախ ու ժիր.
Աշխատանքով անկախ ու ժիր
Տեղը յեկած սուր ել կանոն՝
Թշնամու դեմ անվախ ու ժիր:

Դե շատ թոիր սիրուն նամակ,
Իմ յարիս մոտ արագ-արագ,
Աշխույժ սրտես շատ բարև տար
Վորոշիլովյան կարմիր բանակ:

1937 թ.



ՍՏԱՎԻՆԸ ՅԵՎ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

I

Սյն հեփաթական յերագներն անուշ,
Վոր թվացել է ցնորք մարդկության,
Սյսոր կյանքի մեջ իրականացված
Մարդիկ պարզ աչքով տեսնում են նրանց:

Ով դու մեծ հաննար, կամք ժողովրդի,
Փառք և բախտը մեր մեծ աշխարհի.
Մի՞թե յերկիրը կարող է տեսնել
Քեզանից պարզ լույս հանդեպ խավարի:

Նա շատ է տեսել հզորներ դաժան
Ներոն, Լենկթեմուր, Նապոլեոններ նեղ,
Վոր արյան ծովում լոկ փառքի համար
Վարվել են, վորպես կյանքի ցավ ու ցեց:

Տանջանքի ծովից դուրս բերիր կովով
Մեր ժողովրդին մի դրախտ աշխարհ,
Սուրբ խաղաղության բույրերով լցված
Շողով ու շաչով մի գարուն ծաղկած:

Մի գարուն պայծառ, վոր լիքն է կյանքի
Ամեն բարիքով ժողովրդի համար,
Վորի շողերով ծաղկեց մեր աշխարհ՝
Փայլեցին մտեր, չփացավ խավար:



Մեր վարդ աշխարհում՝
Են վոր մանուկներ աչերը նմում
Մանկապարտեզի ճամբան են բռնում,
Մայրերը ժպտում՝ ծաղկի պես գարնան՝
Ու մանկանց գրկում, են քե՛զ են հիշում:

Են՝ վոր հավասար աղջիկ ու տղա
Խմբերով ուրախ դպրոց են գնում
Ու մտքի աչքով վողջ տիեզերքի
Խորքն են քափանցում, են քե՛զ են տեսնում:

Են՝ վոր ազգերը վոնց հարսանիքի
Փառքի և պատվի գործի յեն գնում,
Սովսոզ ու կովսոզ դաշտերից առատ
Բերք են հավաքում, են քե՛զ են յերգում:

Են՝ վոր փաբրիկ ու գործարանների
Շչակները գիլ շաչում, շառաչում,
Կարիքից փրկված վողջ բանվորության
Սրտերն են բնդում, են քե՛զ են կանչում:

Են՝ վոր աղջիկներ—տղաների հետ
Մեր ազատ յերկրում սեր են վայելում,
Ու յերջանկության այդ փաղցր ժամին
Քե՛զ են կյանք խնդրում, են քե՛զ են որհնում:

Մարֆու ու Ենգելսի սուրբ ազատութեան
 Լույս կառուցվածքի հիմքերի վրա՝
 Լեւինյան տաշած գմբուխտ ֆարերով
 Դու լրացրիր մեծ շենքը անմահ:

Դուք չորրորդութեան անմահ արևներ,
 Մարդկային ցեղի վառվռուն հույսեր,
 Խավար մտքերի բողբոջ պատուեցիք,
 Կյանքի, պայքարի վառ արշալույսեր:

Դու հայր Ստալին, փառք ժողովրդի,
 Զկա աշխարհում վոչ մի խավար ուժ,
 Վոր կարա կտրել քեզ ժողովրդից
 Հանդեպ թշնամու պայքարում անդու:

Նա բուն թե արթուն քեզ հետ է կապված
 Յե՛վ սիրակորով բռն հովն է շնչում.
 Անունդ պայծառ և սեր է և հույս
 Դարնան պես ծաղկած ամեն մի սրտում:

Ահա թե ինչու մեր կին, տղամարդ,
 Ազնիվ վորդու պես քեզ հետ են հաստատ,
 Մեկ սրտի նման միշտ կազմ ու պատրաստ՝
 Ինչպես հսկաներ թշնամու դիմաց:

Թող համարակիցի անարգ թշնամին,
 Թող գեթ մի անգամ նա փորձի մոտ գալ,
 Մեր ժողովրդի հրից բոցավառ
 Նա կըմոխրանա չոր ծառի նման:

Մեր ժողովուրդը հեշտ չի մոռանա
 Իր աչքով տեսած աղետները հին.
 Նա թույլ չի տա իր հայրենիքը ծաղկած
 Գանդելու մտնի լկտի թշնամին:

Ինչպես մերկ ձեռքը չի կարող ծալել
 Պողպատից ձուլած անխորտակ սրին,
 Այնպես էլ գազան բուրժույրը յերբեք
 Զի կարող թե՛ էլ մեր ժողովրդին:

1938 թ.





ԱՇՈՒՂ ԱՇԽՈՒՅԺ

Ս Տ Ա Ղ Ի Ն

Սագ ու ֆյամանով գովեմ քեզ,
Դու մեր սիրելի Ստալին,
Նոր լույս, նոր արև բերիր մեզ,
Վառ, անհանգչելի—Ստալին:

Աշխատող մարդկության հոգի,
Շատ շատերին հանիր վառֆի,
Ամեն հետամնաց ազգի,
Հույսն ես ցանկալի—Ստալին:

Ոգնական թշվառ նեղելոց,
Գթոտ հայր բանվոր—գյուղացոց,
Դու բերեցիր լույս ու դպրոց,
Անվամբ գովելի—Ստալին:



Սրածներդ վո՞րբ գովեմ,
Հագարներ են, վեհ ու վեմ,
Ստեղծած յերկրիդ ինչ՞ ասեմ,
Դրախտ ծաղկալի—Ստալին:


Բալեֆդ մանկապարտեզում,
Բազում դպրոց ու տեխնիկում,
Ին հույսով են ապրում, շնչում,
Յերջանկության հայր—Ստալին:

Հագեցնող աղբյուր շատերի,
Գթառատ հայր միլիոնների,
Բազմանդամ ընտանիքների
Հույսն ես բարի Մեծ Ստալին:

Կեցցե խորհուրդներ փառապանծ,
Կեցցե բանակդ գերազանց,
Կեցցես հույսը կարոտ մարդկանց,
Իմաստության ծով Ստալին:

Յես, Աշխույժս, միշտ լիահույս,
Քեզնով տեսա աշխարհի լույս.
Դու մի փարոս ես իմ հոգույս,
Մեծ հայր, հուսալի՛ Ստալին:





ԱՇՈՒՂ ՇԵՐԱՍ

ԼԵՆԻՆԸ ՅԵՎ ՍՏԱԼԻՆԸ

I

Մեծ Լենինը այս որերը գուշակեց,
Մարդկությանը լավ ծրագիր մշակեց.
Շատ տանջանք ու դառնություններ մաշակեց,
Լույս ծրագիր մեզի բողեց ու գնաց,
Իրան հավերժ անմահ անունը մնաց:

Բազում ազգեր մեկ տեղ բերեց, միացրեց,
Քեն ու վոլսը նրանց սրտից վերացրեց,
Ճնշված մարդկանց ազատեց ու լիացրեց,
Բարի, անմահ անուն բողեց ու գնաց,
Մեր սրտերում սեր ու հարգանքը մնաց:

Ահա մեր հայր Ստալինը ժրաջան,
Չար թշնամյաց ջնջեց արեց ցիր ու ցան,
Մեր յերկիրը շինեց ծաղկած բուրաստան,
Կեցցե՛ Ստալինը իր ընկերներով,
Կեցցե՛ սավետը իր ժողովրդով:



ԱՇՈՒՂ ՇԵՐԱՍ

ԼԵՆԻՆԸ ՅԵՎ ՍՏԱԼԻՆԸ

II

Քսան տարիդ ցանկամ դառնա քսան դար,
Ամենայն տեղ մարդիկ ապրեն հավասար,
Խարդախ, դաժան իժեր կորչեն շարվեշար,
Քո անունդ անմահ մնա, ո՛վ Լենին,
Կեցցես, ապրես դու անվեհե՛ր Ստալին:

Համայն աշխարհ գաղափարիդ միանար,
Շահագործողն ես աշխարհից վերանար,
Թող մեր առաջնորդը տեսներ հիանար,
Անունդ անմոռաց մընա, ո՛վ Լենին,
Յերկար ապրես, մեր աննմա՛ն Ստալին:

Դուք վերացրիք վողջ գրկանք ու տառապանք,
Դուք տվիք աղքատին հաց ու սփոփանք,
Ստեղծեցիք ուրախ և ունեվոր կյանք.
Անմահ մնաս շիրիմիդ մեջը, ո՛վ Լենին,
Հազար տարի ապրես, մեր հա՛յր Ստալին:





Ս Տ Ա Լ Ի Ն

Լեզվից թույլ եմ, վոր քեզ համար քառ ասեմ,
 Գրչից գուլ եմ անձիդ համար յերգ հյուսեմ,
 Բարձր անձդ կուգեմ շքեղ նկարեմ,
 Յեկ քեզ պատկան լրիվ պարտքս կատարեմ:
 Մեծ Լենինին վսեմ հանճար եմ տեսել,
 Նրա հետ միշտ հսկա անունդ եմ լսել.
 Դու մեզ համար ծնվել ես հայր հարազատ,
 Ձեր ջանքով է՝ ող ենք շնչում նուրբ, ազատ:
 Դու մեզ համար մի քանկագին էյակ ես,
 Լույսեր սփռող մեր գլխին պարզ պսակ ես,
 Վա՛յ թշնամուն, վոր մեզանից չի յերկնչում,
 Ժողովրդին ստրուկ տեսնել է տենչում:
 Շերամս ել քո տեսիլդ տենչով ծերացա,
 Ամեն վայրկյան հանճարովդ հիացա,
 Ձերմ փափագս է քեզի տեսնել մտտիկից...
 Հանճար, կեցցես համայն յերկրին կարեկից:



Մ.Ռ.Ս.ԶՆՈՐԴ


Մեծ Ստալին, ջանքիդ մեռնեմ
 Դու մարդասեր կյանքիդ մեռնեմ,
 Ամեն աշխարհ սեր ես սփռում,
 Ժայռից ամուր կամքիդ մեռնեմ:

Աշխարհ յեկար ինչպես լույս որ,
 Յեղար միշտ մեզ պաշտպան հզոր,
 Բեզնով ենք մենք կյանքը սիրում,
 Թե գյուղացի և թե բանվոր:

Հանճար ես դու արեգական,
 Արևի պես անմահական.
 Մեր աշխարհին կյանք ես տալիս,
 Լուսավորում մեր ապագան:

Շերամս քեզ եմ մանաչել,
 Եշխիդ համար խաղ եմ կանչել.
 Թեպետ չորցել էյի վաղուց,
 Բեզնով նորից եմ կանաչել:





ԱՇՈՒՂ ՇԵՐԱՄ

ՀԵՅ ՍՏԱՒԻՆ, ՎԵՂ ՍՏԱՒԻՆ

Սրբվից մեծ լույս ես տալիս,
Ժողովրդին հույս ես տալիս,
Հե՛յ ստալին, վե՛հ ստալին,
Քեզ ձոն հազար, ջան Ստալին,
Զանքս քեզ դուրքան Ստալին:

Բաղ ու բաղչին բույս ես տալիս,
Մեզ միշտ խրախույս ես տալիս,
Հե՛յ Ստալին, վե՛հ Ստալին,
Քեզ ձոն հազար, ջան Ստալին,
Զանքս քեզ դուրքան Ստալին:



Վոսկե գահից խույս ես տալիս,
Քո գործով խրատ ես տալիս,
Հե՛յ Ստալին, վե՛հ Ստալին,
Քեզ ձոն հազար, ջան Ստալին,
Զանքս քեզ դուրքան Ստալին:

Անծայր հզոր հանճարովի
Թշնամուց կորույս ես տալիս.
Հե՛յ Ստալին, վե՛հ Ստալին,
Քեզ ձոն հազար ջան Ստալին,
Զանքս քեզ դուրքան, Ստալին:





ԱՇՈՒՂ ՇԵՐԱՍ

Ա.Ռ.Ա.Զ ԽՍ.ՎԱՐ ԵՐ...

Առաջ խավար եր մեր շուրջը,
Մինչ յեկավ մանգաղն ու մուրհը,
Դու յես մեր բախտի կամուրջը,
Ա՛յ Ստալին, ջան Ստալին:

Բարձր գործեր ես կատարում,
Բանվոր դասակարգին պահում,
Թայրդ չկա վողջ աշխարհում,
Դու մեր աննման Ստալին:

Դու մեր յերկրի ամուր հիմքն ես,
Դու մեր հույսն ու հավատն ես,
Մեր սիրելի հարազատն ես,
Մեզ մեծ հոր նման Ստալին:



ԱՇՈՒՂ ՇԵՐԱՍ

ՄՏԱՆԻՆԻ ՊԱՏԵՆԻ ԱՌՋԵՎ

Վարձր պողպատ ամբոց ես,
Կյանքի շքեղ դպրոց ես,
Անշեջ ջահ ես բյուրեղից,
Հուր արեկ ես աշխարհին:

Ովկյան ես խոր անհատակ,
Գանձեր շատ կան խորքիդ տակ,
Վոչ մի աշխարհ չի ծագում
Քեզ պես պայծառ արեգակ:

Ստալին, հայր հարազատ,
Կյանք տվիր մեզ հարք, ազատ,
Շերամս եղ շուխ պատկերեղ
Վառնեմ հրեկանք ու լազար:





ԱՇՈՒՂ ԱՅԱ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԻՄՔ ՍՏԱԼԻՆ

(Դասակ)

Մութ աշխարհից հանեց լույսը,
Այս լույսը հանողին մատաղ,
Նա յեր տվեց խրախույսը,
Յես այդ խրախույսին մատաղ:

Խրախույսը մեծ Կարլ Մարքսին,
Վոր ենգեղսի հետ միասին,
Են առաջին մեծ խոսքն ասին,
Վորի կատարողին մատաղ:

Կատարեց խոսքի անգիներ,
Բռնեց նորը, քողեց հինը,
Հսկեց, հորինեց Լենինը,
Ծրագիրը քողնողին մատաղ:



Ծրագիրը փոխեց գործի,
Դիմեց հազար տեսակ փորձի,
Հիմա յեկ կյանքը տխուր չի,
Եկ կյանքն ստեղծողին մատաղ:

Կյանք ստեղծեց Ստալինը,
Գործերից ասեմ վո՞ր մինը,
Շինեց նորը, բանդեց հինը,
Քանդող ու շինողին մատաղ:

Դեն բցեցին բռնակալին,
Ջախջախեցին են վատ չարին,
Անհաղթ, հզոր, մեծ Ստալին,
Քեզ աչքով տեսնողին մատաղ:

Հիմքը ամուր ու հիմնական,
Փառավոր գործեր գովական,
Քաջ ընկերներն էլ յուր նման,
Թիկունքը պահողին մատաղ:

Ով յերախտիքը մոռանա,
Ջուլտ աչքերովը բռանա,
Ձեզ սիրացողը գորանա,
Սրտանց աշխատողին մատաղ:

Թող Սավետը մընա հաստատ,
Մեր Ստալինը հարագատ,
Իր ընկերներով շատ ու շատ
Յերկիրը պահողին մատաղ:



Թշվառ մարդիկ ուրախացան,
 Հաց ու ոգնուքյուն ստացան,
 Ապրեցին, անին, գորացան,
 Եղ որը բերողին մատաղ:

Ես ի՛նչ ուրախ ժամանակ է,
 Զար խոսողի ձայնը փակ է,
 Յերգիչ Աքա դու նվագե,
 Աշխուժով լսողին մատաղ:



ԴՈՒ ՄԵՐ ՅԵՐԿԻ ԼՈՒՅՍ ԱՍԱԼԻՆ

Սրբվի պես փայլ ես տալիս, դու մեր յերկրին, Ստալին,
 Հաղթանակը քո ձեռքիդ է, միտքդ ու գեներդ սուր, Ստալին.
 Թշնամիքդ ինչ էլ արին, դու միշտ արթուն մնացիր,
 Հակառակորդի բաղձանքն անցավ իզուր, Ստալին:

Միշտ հավատարիմ եմ քեզ, հայր, աշակերտներդ,
 Ժողովուրդը սիրում է քեզ, պաշտպանում արդար կարգերդ.
 Թշնամիքդ սարսափում են տեսնելով քո ուժերդ,
 Հին աշխարհը փոխելու դու լույս, ուղեցույց Ստալին:

Աշուղ Աքան կանե—հողմ ու քամին յերկաթին ի՞նչ կանի,
 Գիշեր, ցերեկ կուզի փչի, նա ամուր ժայռին ի՞նչ կանի,
 Փաշխտը փայտ է, մենք պողպատ, փայտը պողպատին ի՞նչ կանի,
 Ամենայն կողմերով հզոր, դու լիակատար Ստալին:





ԱՇՈՒՂ ԱՅԼ

ՈՒՆԵՆՔ ՄԵՆՔ

Փայտե՛ք Չանգեգուրից մուսափաք, դաշնակ,
Մասկովից ստացած նամակ ունենե՛ք մենե՛ք.
Մեր սար ու ձորերը կփայլին շուտով,
Ստալինի դրկած նրազ ունենե՛ք մենե՛ք:

Ստալինը մին ա շափաղը հագար,
Յերկիրը դարձրուց բեռն լալագար,
Քշեց քամրզացրեց հայդուկ, ջանքեգար,
Լավ իմացե՛ք, կարմիր բանակ ունենե՛ք մենե՛ք:

Քաջ Վորոշիովն ա իրա էյումագը,
Շատ ա քաջուրենը, խելի ամագը,
Կեցցեն մարշալները, կարմիր բանակը,
Իմացե՛ք վոր խաղաղ մի կյանե՛ք ունենե՛ք մենե՛ք:

Բացվիր, պայծառացիր, ով աշուղ Աքա,
Այսուհետ գլխովդ ել չի գալ խարա,
Ինչքան կուզե՛ք փչե՛ք ցուրտ դիյամաքը,
Ստալինի նման արե՛վ ունենե՛ք մենե՛ք:



Վ Ե Ր Դ Ի

ՎՈՂՋՈՒՅՆ ԱՌՄԱՋՆՈՐԴԻՆ

Սովետական լույսով ցոլած,
Յերջանիկ հայ ժողովրդից —
Հայաստանի հողից, ջրից,
Դարից-դաշտից, սարից-ձորից,
Ղեկավարին մեր մշտաբթուն
Բյուր սրտերից վողջո՛ւյն, վողջո՛ւյն:

Յեղբայրական Հայաստանի,
Ե՛ն բազմազգի ժողովրդից —
Հայից, քրդից և ասորուց,
Ադրբեջան, հույն, հրյայից
Առաջնորդին մեր անկուռն,
Վառ, սրտալի վողջո՛ւյն, վողջո՛ւյն:



Գործարաններից շարվեշար,
Կոլխոզներից շեն ու վարար.
Շինարարությունից անքիվ.
Դպրոցներից հագա՛ր, հագա՛ր.
Հիգրոկայաններից հնչյուն,
Առաջնորդին՝ վողջո՛ւյն, վողջո՛ւյն:

Ագատ, անկախ Հայաստանի,
Ե՛ն կապտաշյա սեգ Սեվանից,
Արաֆս, Ագատ, Այսուրջանից,
Արփա, Վեդի, Արլաշանից.
Յե՛վ Հրազդանից շառաչյուն,
Մե՛ծ կերտողին՝ վողջո՛ւյն, վողջո՛ւյն:

Վեհ ու հպարտ սեգ սարերից.—
Արա, Ամբերդ, Ալագյազից,
Բյոթուզ, Հադիս, Բոզ-բուռուռնից,
Գեղամ, Սալ-թափա լեռներից,
Յե՛վ վեհ Մասսից են մշտաձյուն,
Ղեկավարին՝ վողջո՛ւյն, վողջո՛ւյն:

Հայաստանի ազգերն ուրախ,
Անհուն սիրով կփափագին,
Կյանք և արե՛վ Ստալինին,
Մարդկության եղ մե՛ծ գավակին.
Նա, վոր դարձրեց կյանքը խնդուն,
Նրան՝ հագա՛ր, հագա՛ր վողջույն:



ՍՏՆԱԻՆԻ ԱՍՅԾԸ

(Գասան)

Ստալինի ասածը
Աշխարհե՛մ մեկ չավ եմ ասում,
Խեղճ, բանիմաց, ընտիր,
Բաջ բարեհամբավ եմ ասում:

Բաջ բարեհամբավ ու ժիր,
Գործով արժան ու ընտիր,
Բարի, արդար վեր ու դիր,
Ամեն կողմով լավ եմ ասում:

Ամեն կողմով լավն իրա
Տարածվեց յերկրի վրա.
Ղեկավար գործը նրա
Մի անկործան նավ եմ ասում:

Անկործան, գործովը մե՛ծ,
Մխտը պարզ, սիրտը անկեղծ,
Մե՛զ յերջանիկ կյանք բերեց,
Ամեն ինչով բավ եմ ասում:

Ամեն ինչով լիացավ,
Ժողովուրդն անհոգ, անցավ,
Են հինը գնաց, անցավ,
Անցածին պարսավ եմ ասում:



Անեծք ու պարսավ վատին,
Յուր գործով համեմատին,
Իսկ մեր կյանքի մեծ վարպետին,
Գովեստս հարկավ եմ ասում:

Հարկավ գովեստի արժան,
Անհամեմատ, աննման.
Թե գովեմ հազար բերան,
Գիտցեք, դեռ սակավ եմ ասում:

Սակավապետ, իմաստուն,
Հաննարեղ, միտքը արթուն.
Հույժ համբավը մեծ մարդու
Հյուսիսից հարավ եմ ասում:

Հյուսիսից հարավ նրա
Տարածվեց բարի լուրը.
Աշուղ վերդին ել իրա
Տեսության ծարավ եմ ասում:



ԱՇՈՒՂ ՎԵՐԴԻ

ՄՏԱՆԻՆԻ ԿՈՒՎՐ

1

Լենինն ու Ստալինը, յերբ վոր ժանդ ցարին
Ու նրա հաջորդ Կերենսկուն ջարդին,
Յերբ դրին իրենց կարգ ու կանոնը,
Ել հարուստների չտարավ ֆունը...

Քանի վոր հաղթող բանվոր գյուղացին՝
Ամբողջ յերկիրը առան տիրեցին,
Յերկրի չորս կողմից՝ ել գրաֆ, կնյագ,
Կուլակ, գեներալ, քուջար ու բագագ,
Ել սարգյար, ժանդարմ, ել կավաձատեր,
Ել յեպիսկոպոս, մոլլա ու տերտեր,
Մենշևիկ, դաշնակ, մուսաֆաթ, կադետ,
Խան, մելիք ու բեգ, քյոյսվա, խմբապետ,
Խուլասա ինչքան շուն ու գել կային,



Ջանները բունց ահեղ սարսափը,
 Ել ինչ ունեյին, քեքեվը առին,
 Ծանրը քողին, քափին ու վառին,
 Հայ հարայ իրենց գցեցին սահման,
 Փախան ու անցան դեպ արտասահման:

2

Իսկ ուրիշ յերկրի թագավորները՝
 Կուլակ, բուրժուա փողատերերը,
 Յերբ վոր եղ բանը տեսան, սարսեցին,
 «Չեր տունը ֆանդվի»,— իրար ասացին.
 «Թե եդպես գրնա, աշխարհը բոլոր,—
 Լենինն ու Ստալինը կտիրեն մի որ...
 Յեկե՛ք ֆանի դեռ ուշ չե, միանանք,
 Փախնող ուսուների ուժն էլ մերի հետ,
 Մի թույլ կողմ գտնենք, մտնենք վրա տանք,
 Ջնջենք սավետը ու անենք անհետ...
 Յերբ եղ կատարենք ու նրանց տանք վերջ,
 Յերկիրն էլ հալալ կկիսենք մեր մեջ»...

3

Ու եդպես նրանք յերբ վորոշեցին,
 Զորք ու զորապետ առաջ ֆաշեցին,—
 Անգլիան եկավ իրա դռնունով,
 Ամերիկան եկավ իրա դռնունով,
 Գերմանիան եկավ իրա դռնունով,
 Ֆրանսիան եկավ իրա դռնունով,



Իտալիան եկավ իրա դռնունով,
 Բելջիկան եկավ իրա դռնունով,
 Հունաստանն եկավ իրա դռնունով,
 Ռումանիան եկավ իրա դռնունով,
 Հոլանդիան եկավ իրա դռնունով,
 Յերբ գորք ու դռուն հավաքին, բերին,
 Կանչեցին ըռուս գեներալներին,—
 Եկավ Վրանգելն իրա մարդկանցով,
 Եկավ Դենիկինն իրա մարդկանցով,
 Եկավ Յուդենիչն իրա մարդկանցով,
 Եկավ Ժանտ Մախնոն իրա մարդկանցով.
 Բուրժուներ տրին իրենց մալ-խագնան,
 Իսկ մնացածը տրին իրենց ջան...

4

Ու եդպես զարբով, միացած ուժով,
 Յելան փրփրոտած ֆանց կատաղի ծով,
 Գնացին Լենին-Ստալինի վրա,
 Վոր յերկիրն առնեն, անեն ավերակ,
 Վոր նորամանուկ Սավետը լսեդդեն,
 Բոլշևիկներին հաղթեն ու ջարդեն...

5

Խաբարը գնաց Լենին-Ստալինին.—
 Թե՛ ահա յեկան գորքով ահագին,
 Ինչքան աշխարհում վոր կան թագավոր,
 Բուրժուների հետ միացած գորքով,

Գեներալներն ել ձեզանից փախած,
Ամբողջը յեկան իրար միացած,
Ու կազմած դաժան մի բանակ լպիրշ,
Քշեցին յեկան ձեզ վրա կռիվ...

6

Եդ վոր իմացավ,
Լենինը դարձավ՝
Ասեց,—Ստալին, Կենտկոմը թե յես,
Եդ գործը ամբողջ հանձնում եմք քեզ,
Առ բանակդ ֆաջ,
Սլացիր առաջ.
Ամբողջ աշխարհի կեղեփողները
Խմբված են յեկել Սավետի վրա,
Բայց և եդ մասին դու դարդ մի արա.
Ինչքան զրկված կան աշխարհի վրա,
Մեր ազատության առել են համը,
Դառել են անկեղծ մեր բարեկամը,
Սրանք ավելի շուտ կուզեն մեռնել,
Քան մեկ էլ նախկին սև որին դառնալ...
Դու բանակդ առ ու գնա սահման,
Նամարդ թշնամուն առաջ հանդիման.
Իսկ յես կոչ կանեմ թող գան ոգնության,
Սավետ աշխարհում վարքան ֆաջեր կան...
Թող գան դռները դեմ տան բռնության,
Կամեն է աշխարհում վնոում ամեն բան,
Թող գան բանվորները թիվ հազար ու բյուր,
Թող գան գյուղացիք անհող ու անջուր,
Թող գան ծառաներ՝ ստրուկ, հալածված,
Թող գան փեշաֆյար, խեղճ, սնանկացած:

Թող գան բատրակներ նվաստ ու լքված,
Լուռ, իրավագուրկ, ցավի տակ կրքված.
Թող գան, ով գահի, կրոնի ձեռքից
Զրկվել է պատվից, մարդկային դեմքից.
Ով գործարանում ու կովում ջարդված,
Հաշմ ու անտերուց փողոց եր նետված...
Թող գան ով կարա ձեռքին զենք բռնել,
Թող գան ով կարա հաղթել—կամ մեռնել...

Ստալինը ֆաջ ու պայծառ
Եդ վոր լսեց, ասեց—«շատ լավ»
Ու կանգնեց նա՝ չինարի ծառ,
Կարծես շարժվեց տեղից մի սար.
Առավ կապեց վառ ու ընտիր
Անհաղթ զենքը ու զրահը իր.
Թռավ նստեց իր ձին ինգլիզ,
Բոյը սուջա, ջեյրանավիզ,
Աստեց, կանչեց անեղաձայն,—
«Նյ, գորավար իմ ընկերներ.
Գնանք կովի որհասական
Ժողովրդի վաղվան համար,
Ժողովրդի պատվի համար,
Խորհրդային կարգի համար,
Ազատ ու լույս կյանքի համար,
Գնանք ջարդ տանք բուրժուայներին,
Ժողովրդի դահիճներին:
Զորք-գորավար յեկան զգաստ
Ստալինի կոչին պատրաստ.



Առաջ յեկավ Վորոշիլով
 Իր քաջարի կարմիր գնդով:
 Առաջ յեկավ Բուդյունին ժիր,
 Հեծելագոր ուժով ընտիր:
 Առաջ յեկավ Կիրովն արի,
 Վաշտերովը գոռ, քաջարի:
 Առաջ յեկավ վեհ Չերժինսկին,
 Բուլշեվիկյան մարտիկը հին:
 Առաջ յեկավ սեգ Ֆրունզեն,
 Սրահայաց ինչպես բագեն:
 Առաջ յեկավ քաջ Չապայեվ,
 Հուր ու հզոր կայծակնաբեվ:
 Առաջ յեկավ Սերգոն արի,
 Բանց փահլեվան մի վիթխարի:
 Առաջ յեկավ վառ Միկոյան,
 Կտրին, զվարք ու ժրաջան:
 Առաջ յեկավ Շչոբար գյանջ,
 Հպարտ, անահ պարթևալանջ...
 Զորք-գորավար շարֆով, շարֆով,
 Յեկան, յեկան անթիվ շարֆով
 Ու շարվեցին հուժկու, ահեղ,
 Ստալինը ձայնով գորեղ,
 Կանչեց,— դեհ քաջ իմ ընկերներ,
 Գնանք կովի մենք վնոական
 Խորհրդային կարգի համար,
 Ժողովրդի կյանքի համար:



Յարիցին քաղաքի քովը,
 Դուշմանը իր վողջ ուժովը,
 Յեկել նստել է իր համար,
 Հսկա բանակով անհամար:
 Նրանք անահ վորոշած են,
 Վոր եղ տեղով նամբա բացեն,
 Առաջանան մինչև Մոսկով,
 Խփեն անցնեն: Ու մի խոսով,
 Այնուհետև հեշտ է բանը,
 Տիրել վողջ Ռուսաստանը...

Ստալինը բանակովն իր
 Յեկավ հասավ գոռ Յարիցին:
 Հասավ թշնամու դեմն առավ,
 Դիրքեր բռնեց շարվեշարան...
 Մի կողմիցը՝ արար աշխարհ,
 Ինչքան ունեն գորք, գորավար,
 Իսկ մյուսից՝ բանակը կարմիր
 Զինվորներով քաջ ու ընտիր:
 Մի կողմից՝ հագնված ու կուշտ,
 Ունեն ընտիր գեներ ու փամփուշտ.
 Մյուսից՝ քաղցած բանվոր տղերք,
 Հին գեներով, կամով անթեք:

Ստալինը հզոր ու փառ,
 Սավետական զորքի առաջ,
 Մի բարձր տեղ ելավ կանգնեց,
 Դարձավ զորքին եսպես խոսեց.—
 «Իմ սիրելի զորավարներ,
 Կարմիր բանակ ու ժողովուրդ.
 Մենք մեր բանվոր դասակարգով
 Կործանեցինք ցարին անգուր:
 Հարուստներին ցրիվ տվինք
 Ու կազմեցինք ազատ խորհուրդ,
 Հողը տվինք հողագործին,
 Գործարանը՝ բանվորներին,
 Իսկ մեր յերկրի տերը արքուն՝
 Խորհրդային իշխանություն,
 Ու մեր յերկրի նամբին վառ լույս,
 Մեծ Լենինը փառ, իմաստուն:
 Բայց ջարդ կերած կալվածատեր
 Ու հագար մի կեղեֆողներ,
 Միացել են մեզ հետ դուշման
 Յեղերի հետ բուրժուական,
 Ու կովի յեն յեկել մեր դեմ,
 Կազմելով մեծ բանակ ու զունդ...
 Յեկել են վոր հողը նորից
 Հափշտակեն ժողովրդից,
 Յեկել են վոր կյանքը նորից
 Հափշտակեն բանվորներից

Ու բաժանեն մեր յերկիրը
 Ժողովրդի դահիններին:
 Դուք ել գիտեք, լավ է մեռնել,
 Քան նախկին ժանդ կյանքին դառնալ:
 Յեկել կովի տոկուն սրտով,
 Անվախ ու փառ միշտ բովեֆով...
 Շուտով կգա մեզ ոգնուքյան
 Ժողովուրդը սավետական:
 Կեցցե, կեցցե—վորոտաձայն
 Գոչեց զորքը խորհրդային.
 Կեցցես դու մեր փառ Ստալին.
 Մենք քեզ հետ ենք՝ փայլը փայլին...

Ու բշնամու զորքը մյուս ոք,
 Շարժվեց առաջ, դեպի գրոհ,
 Իրա ուժի վրա վստահ,
 Անբարտավան, բիրտ ու անահ,
 Լայն նակատով, ձևը աղեղ,
 Քանց իժերի մի ժանտ հեղեղ:
 Ստալինը վոր եղ տեսավ,
 Թուավ հրեղեն ձին հեծավ.
 Հեծավ, խրոխտ, նակատը բաց,
 Մըղեց կարմիր զորքին առաջ
 Ու չորս կողմից փանց ամպ ու գամ,
 Առաջացան ջերգով նիզամ.



Հասան իրար գոռ ու կոչով,
 Դանց փրփրած կատաղի ծով.
 Դանց բոցավառ մի հրաբուխ,
 Ժայթփեց բոցը, բարձրացավ ծովս,
 Հրացանները քնդացին,
 Թնդանոթները գոռացին,
 Գնդացիներ կարկուտի հեղ,
 Թափին զնդակ, բոց ու հեղեղ,
 Սավառնակը քռավ ամպեր,
 Թափեց խոշոր ծանր բամբեր,
 Իսկ տանկերը դաժան, հսկա,
 Կրակ տալով եկան վրա.
 Ու անհամար գրահապատ,
 Դղրղյունով հասան մակատ.
 Հետևակները կոացած,
 Առաջ են վազում շարք կազմած.
 Հեծելագործ մեր անվախ,
 Հնձում է սրով աջ ու ձախ...
 Կովոդների հայ հայոցը,
 Վախկոտների վայ վայոցը,
 Մեռնողների խոխոցը,
 Վիրավորաց լացն ու կոծը,
 Հարձակվողաց մռնչոցը,
 Փախնողների ճիչն ու կոչը,
 Բռնել է վողջ սար ու ձորեր,
 Յերկրից մինչև յերկինքը վեր:
 Ու արյունը փանց վարար գետ,
 Մեռած մարդկանց, ջար ու ջանդակ,
 Դշում տանում է իրար հետ,
 Լցնում ձորեր, փոս ու խանդակ...



Մի կողմից՝ վողջ արար աշխարհ,
 Ինչքան ունեն գորք գորավոր.
 Իսկ մյուսից՝ Բանակը Կարմիր,
 Ժողովրդի վարդիփն ընտիր:
 Մի կողմից՝ հագնելված ու կուշտ,
 Ունին ընտիր գեղեփ ու գրահ,
 Իսկ մյուս կողմից՝ մերկ ու փաղցած,
 Զենքերով հին ու զանազան...
 Մի կողմից՝ նեղ հա՛յ են տալիս,
 Զորքին բոթում սվինամարտ,
 Իսկ մյուս կողմից՝ ինքն է գալիս
 Ստալինյան գորքը անպարտ:

.
 Կռիվը նոր էր տափացել,
 Ժողովրդի ծայրը բացվավ.
 Մեծ Լենինի արդար կոչով,
 Ոգնությունը յեկավ հասավ...

Հա՛յ, հա՛յ, եկան վեհ բանվորներ,
 Եկան հասան հազար-հազար,
 Հա՛յ, հա՛յ, եկան գյուղացիներ,
 Եկան հասան հազար-հազար:



Հա՛յ, հա՛յ, եկան մերկ, սովածներ,
 Եկան հասան հագար-հագար...
 Թափան եկան ֆաղաֆներից,
 Բանվորները հագար ու բյուր.
 Թափան եկան վողջ գյուղերից,
 Զուրկ, կեղեփված, անհող, անջուր.
 Ղշաղներից, յայլաններից,
 Խուտորներից ու շեններից.
 Թափան եկան հագար մի ցեղ,
 Քանց քև առած առյուծ ահեղ,
 Քանց մի լավա հոսուն ու վառ,
 Քանց ավերող հզոր քաքառ.
 Քանց մի ցասման հուր ու հեղեղ,
 Քանց փոքորիկ գոռ ու ահեղ...
 Վորոտալով ֆանց գարնան ամպ,
 Լցվան անտառ, ծմակ ու շամբ.
 Ու հոսեցին ծովի նման,
 Քաջ Ստալինին ոգնուքյան,
 Վոր սավետի համար կովեն,
 Վոր սավետի համար մեռնեն...

14

Ստալինը բուրբ ֆաշեց,
 Ջին խթանեց, առաջ ֆշեց.
 —«Այ, ջան,—կանչեց—Կարմիր Բանակ,
 Դուշմանին չտանք ժամանակ.
 Եկավ հասավ ժողովուրդը
 Դուշմանին տանք վերջին ջարդը:



Մեծ Լենինն է դնում պահանջ,—
 Վոչ մի յերկյուղ, վոչ մի նահանջ...
 Ասեց, գորֆի առաջն անցավ,
 Ջին խթանեց ու սլացավ...

15

Ինչպես բյուրավոր հրաբուխ,
 Մեկեն կժայթենք քնդալի,
 Ինչպես ովկիանի փոքորիկ,
 Դորդյունով ալիք-ալիք.
 Ինչպես քաքառ, սամում ֆամին,
 Մոնչում է ձայնով ուժեղ,
 Ենպես վրա տվին—հասան,
 Բուլչեիկյան գորֆ, պարտիզան:
 Վրա տվին սարից, ձորից,
 Ու չորս կողմից առաջ քափան.
 Վրա տվին ֆարից, ֆուլից,
 Քանց կատաղած ծովի լափան.
 Վրա տվին՝ դաժան, ուժեղ,
 Կարկուտի պես խոլ ու ահեղ.
 Վրա տվին ֆանց փոքորիկ,
 Ահեղակոչ ձայնով սաստիկ.
 Վրա տվին ֆանց մի հեղեղ,
 Ենֆան հսկա, ենֆան ահեղ,
 Վոր քշնամին սարսով կարծեց,
 Թե բնություն տեղից շարժվեց:

Ստալինը հպարտ ու ֆաջ,
 Իրա գործի գլուխն անցած
 Սլանում է առաջ, առաջ,
 Ջարկում ինչպես շանք ու կայծակ:
 Զորք-պարտիզան վոզջ նրա հետ,
 Բազմապիսի ազգեր ու ցեղ,
 Հասում են ֆանց վարարած գետ,
 Ու դորդում ինչպես հեղեղ...

Են ի՛նչ ուժ է, վոր դիմանա,
 Ժողովրդի ցասման առաջ,
 Յերբ բացող կա աչքը նրա,
 Կըռվի տանող ազատուրջան:

Են ի՛նչ ուժ է, վոր դիմանա,
 Բռնադատված խալիսի առաջ,
 Յերբ վոր նրան դեկավար կա,
 Յերբ վոր նրա բուերն են բաց...

Թոփի ամեն մի կրակոց
 Մեր գործի մեջ բացում է խոց,
 Բայց վրեժը սրտում պահած,
 Կարմիր գործը կռվում է ֆաջ:
 Տանկեր վորքան մադին կրակ,
 Մերոնք պատին շուրջը նրա
 Ու յերբ տեսան դռներն են փակ,



Շուռ տվեցին կողքի վրա...
 Զրահապատ ավտո-վագոն,
 Հասան կպան չորս դրադին,
 Տակ ու վրա տվին ամբողջ,
 Զարդին, աբին դարբադադին...
 Իսկ բշմամու գնդացիներ
 Հարմատում են, ջարդում ագահ,
 Բայց չորս կողմից հեղեղի պես
 Խոյանում է մեր գործն անահ:
 Ու հասնում է իլում,—ջարդում,
 Յարիցինյան փառքը բերում:

Ստալինը բուրբ հանեց,
 Ապանդակեց հրեղեն ձին,
 Վորոշիլովն իրա գնդով
 Հասում է ֆանց փոքարկած ծով.
 Բուդյոննին հեծելագործով,
 Աջ ու ձախ հնձում է բրով.
 Կիրովը իր գնդերով ֆաջ,
 Սլանում է առաջ, առաջ:
 Իսկ Ջերժինսկին ֆաշում, խփում,
 Թրատում է, հնձում, թափում.
 Փրունգեն ֆանց մի սրաքև
 Բագեյի պես նախրում թեթև,
 Զապաևը գերբ մի կայծակ,
 Թափում է վառ բոց ու կրակ.



Որչոնիկիձեն քաջարի,
Թշնամուն բերել է գարի.
Միկոյանը կուռ, շեշտակի,
Կրակ է քափում ուղղակի.
Քաջ Շչոքսը նենգ բշնամու
Սիրտը գցեց մահվան յերկյուղ:

19

Եղպես կարմիր գորգը կովում,
Առաջացավ գոռ ու ահեղ,
Ստալինն էր դեկավարում
Քաջ գորավար, կամֆով ուժեղ...
Առաջացավ ու բշնամուն
Քշեց ինչպես անբան մորեխ,
Ու խառնեցին բուրբն իրար,
Հագարներով միլլաք ու ցեղ,
Ամեն կողմից կալմեջ արին,
Շրջապատին ու գցին նեղ...

20

Խուճապն ընկավ բշնամու մեջ,
Նրան բռնեց մահվան սարսափ.
Ստալինյան լույսն անշեջ,
Տարածվեց վողջ յերկրում անափ:
Թշնամու գորգ պարտվեց, ջարդվեց,
Խաբվածները յեկան հանձնվին.



Իսկ նրանց նենգ գեներալներ
Վորոնիք ընկան, վորոնիք նըղին:

21

Ստալինը հաղթանակեց,
Դուշմանն էլավ ցրիվ-ցաֆան,
Ժողովուրդը մեծ քեֆ սարքեց,
Ու հրնվեցին, ուրախացան...
Զորք, ժողովուրդ կանչին—կե՛ցցե,
Ապրի Ստալինը մեր մեծ,
Վոր անարգ բշնամուն հաղթեց՝
Ու մեզ ընդմիջտ ցավից փրկեց...

Ստալինը Ֆարիցինում
Կարգեց ամուր իշխանություն,
Ու մթերֆով, հացով, փառֆով
Վերադարձավ դեպի Մոսկով...

Լուրը տարան մեծ Լենինին,
Թե աչքդ լույս—Ստալինը
Հաղթեց Կուչակ, Դենիկինին,
Ժողովրդի դուշման գորգին,
Ու նրանց հետ քագավորաց,
Մեր յերկրի դեմ կովի յելած:
Հետ է յեկել գորգով, փառֆով,
Հագար-հագար վագոն հացով՝
Հաղթանակի դեկավարը,
Ֆարիցինյան գորավարը:
Լենինը շատ ուրախացավ:



Շկավ քաջին համբյուր տվեց,
— Բոլշևիկյան մեծ գորավար,
Ամբողջ սրտով սիրում եմ քեզ:

Յե՛վ Ստալինը խոսք տվեց,
Վոր հավիտյան անդամանան,
Լենինի գլխի դրոշը մեծ
Կպահե բարձր ու հաղթական:

Ու իր խոստման հավատարիմ
Ստալինը մեր հանճարեղ,
Կոմունիզմի ճակը հզոր
Վարում է անխոտոր, անշեղ...



Վ Ե Ր Դ Ի

Տ Ե Ս Ա

(Դասակ)

Ձան Սավետի չենաղ աշխարհի,
Հող ու ջուրդ առատ տեսա.
Լենին—Ստալինյան կերտած,
Խորհուրդդ հարագատ տեսա:

Ել չկան հարուստ, չբավոր,
Մարդիկ հավասար, ամեն որ
Աշխատում են, ապրում անդորր.
Վեր ու տիրդ հաստատ տեսա:

Ջանասեր վորդիքդ արի,
Զորանում են տարեց տարի.
Կամքով ուժեղ, սրտով արի,
Ղեկավարդ պողպատ տեսա:



Նոր սահմանադրությունը
 Հաղթանակի ֆենուքունը,
 Ցույց տվեց քո գորությունը,
 Յերկիրն ուրախ, գվարք տեսա:

Որ ըստ որե գորացար դուն,
 Կազմեցիր հորհուրդ Գերագույն,
 Ստացար մեծ, վսեմ անուն,
 Անքերի գաղափարդ տեսա:

Զավոդ, փաբրիկ, հիդրոկայան,
 Բագում դպրոց, համալսարան,
 Զբանգք, մետրո շարվեշարան
 Շքեղ անհամեմատ տեսա:

Սավետը յերկրին տիրացավ,
 Շահագործումը վերացավ,
 Տիրոդ բանվորը գորացավ
 Խեղն գյուղացուն անդարդ տեսա:

Մեր մեծ կառավարությունը,
 Արի, ջինջ կուսակցությունը,
 Ղեկավարի ուղղությունը,
 Կատարյալ անաղարտ տեսա:

Երեկվա աղոթք անողը,
 Ժամ գնացող խաչ հանողը,
 Սրբերին մատաղ տանողը,
 Այսոր կիրք, անաստված տեսա:



Փոխվեցավ զամանն ու դարը,
 Կործանվեց զանգիկն ու չարը,
 Են նախկին գրկված նոքարը,
 Հիմա կատարյալ մարդ տեսա:

Շուռ եկավ աշխարհը հանկարծ,
 Գնացողը գնաց անդարձ,
 Նիկոլի, դաշնակի ֆանդած
 Յերկիրն այսոր արև տեսա:

Մեր յերկրի նմանն աշխարհում,
 Վոչ վոք չի տեսել յուր կյանքում,
 Վոչդ դեկավարների շարքում,
 Ստալինին արև տեսա:

Կարմիր բանակը վիթխարի,
 Մարշալ գորավարներ արի,
 Գաջերը սավետ աշխարհի,
 Կտրին, հզոր, անհաղք տեսա:

Յերկրում նոր սերունդը անող,
 Ծով, ցամաք, բեվեռ նվանող,
 Ամեն ասպարեգում հաջող,
 Մեր գործը վառ, փայլուն տեսա:

Կարմիր գծից դուրս ամեն որ
 Արյուն է բափվում նորանոր,
 Ֆաշիզմը վոնրագործ, ստոր,
 Բոլշևիզմը անպարտ տեսա:



Այնտեղ բանվորներն անքիվ,
Պատրաստ են տալ վերջին կոխիվ...
Մեզ համակրող մարդիկ ազնիվ,
Աշխարհում շատ ու շատ տեսա:

Աշխարհի մի կողմումը լավ,
Մյուս կողմում արցունք ու ցավ.
Կամունիզմը արդար, իրավ,
Փաշիզմն ստոր, դահին տեսա:

Խաղաղության սահմանի մոտ
Կիտված դահիճները թունոտ,
Բուրժուական վոհմակն արյունոտ,
Արնաձարավ ջալլադ տեսա:

Փորձեր են անում շարունակ
Սամուրայները սանձարձակ...
Սակայն մեր բանակը կրակ,
Հապուն ամբոխը հարդ տեսա:

Խիրի-խիտոն են անախտան,
Թաքը պարգեց դեպ Զինաստան.
Թեև շուտով մոքին կտան,
Բայց յերկիրը բարբադ տեսա:


Կարմիր գծիցը դուրս աշխարհ,
Փռթորկվում է միշտ վեր ու վար..
Դասակարգերն անհավասար,
Անհաշտ կովի յեղած տեսա:



Մեր սավեսն է քաջ ու զգաստ,
Մի մարդու պես կանգնած պատրաստ...
Իսկ բուրժույր հիվանդ, անաստ,
Նրա գործը խարդախ տեսա:

Վե՛րհի՛ն կանս՝ սավեսական
Մեր յերկրումը կուռ, անասան,
Քաջ սերնդի Ստալինյան
Դրոշները ալ վարդ տեսա:





ԱՇՈՒՂ ԲԱՍՏԻ

Ս Տ Ա Լ Ի Ն

Սա ջուռեյի սագը ձեռիս,
Փահիդի յերգեմ խաղ Ստալին.
Աշխարհեով մեկ էու համբավիդ
Ասեմ յերգ ու տաղ, Ստալին:

Դաստեֆա ա վոսկե սիմի,
Զիմ յարամիշ մինը մինի.
Թող էու ումբրըդ յերկար լինի,
Արևի շափաղ Ստալին:

Սեր ու սավդի հիմքը տիրիր,
Պարս ազգերին սիրեցիր,
Ընդունց քամուզ ախպեր ըրիր,
Հունց մի տուն, ոջախ Ստալին:




Բանակ ունենի հազար, հազար,
Հուրիշ կա վոչ ընդուր հավար,
Գյուլի բաղ էս շինել աշխարհ,
Դունյա ամբողջ սաղ, Ստալին:

Զիմ էյասիբին ընդունեցիր,
Վարլի, գանգին խոիկ տըվիր,
Մեր աշխարհքը դրախտ շինիր,
Քանց վեսկի վարաղ, Ստալին:

Աշուդ-Ռաստին գանգեզուրցի,
Համբավըդ շուտանց լըսեցի,
Քեզ արևից մենձ իմացի,
Դուշմանի քոխմախ Ստալին:





ԱՇՈՒՂ ՀԱՐՈՒՅՑՈՒՆ

ՈՎ ԺՈՂՈՎՈՒՐԴ

Ով ժողովուրդ, դու ել ինձ հետ միասին
Ստալինին տեսնելու նպատակ ունենի.
Են վոր փրկեց մեզի ցարերի դավից,
Փրկողին տեսնելու մեծ փափագ ունենի:

Մեր աշխարհը արավ ուրախ գյուլի բաղ,
Մենի նրա ումբրին, արևին մատաղ,—
Մոսկովումը նստած ջամարդ և ուրախ,
Յերեվելի խոսող մին հաննար ունենի:

Աշուղ Հարությունս, յաշով եմ, ծեր եմ,
Կյանքս անց եմ կացրել, քյուլֆաթի տեր եմ,
Ստալինի ուժով նորից ծաղկել եմ,
Մըհիկ ամենքս ջահել, գենջ հասակ ունենի:



ԱՇՈՒՂ ՀԱՐՈՒՅՑՈՒՆ

ՆԿՍԻՐ ՏԵՍՍ...

Ընկեր ՍՏԱԼԻՆԻՆ

Նկարդ տեսա հիացա,
Աննման պատկերիդ մեռնեմ.
Սիրտս խնդաց, ուրախացա,
Են արծվի աչքերիդ մեռնեմ:

Դեմքդ է ազդող պատվական,
Բարիք բերիք վողջ մարդկության,
Կոլխոզ, սովխոզ համայնական,
Ստեղծած դաշտերիդ մեռնեմ:

Աշուղ Հարությունս եմ արի,
Կուզեմ ապրես շատ-շատ տարի,
Ազատ, հավասար ու բարի,
Քո դրած կարգերիդ մեռնեմ:





Քի չչեն յեղել աշխարհի մեջ գյուտարարներ անվանի,
 Բայց աշխարհը քեզ քանաչեց մեծ գյուտարար, Ստալին.
 Ու խայթը իննսունամյա վողջունում է քեզ զվարթ
 Ու քո տարած հաղթանակը, վեհ գորավար Ստալին:



ՄՇՈՒՂ ԽԱՅԱՔ

ՀՍ.ՅԲ ԱՍՏԱԼԻՆԻՆ,

Վոր համաձայնություն է սվել իր բեկնածությունը Բվերկության դնելու
 Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի դեպուտատ ընտրելու համար:

Մեր այս ուրախ որվա առթիվ
 Փունջ եմ հյուսում իմ ձեռքով,
 Ու զարդարում գեղատեսիլ
 Անուշաբույր վարդերով:

Յեկ մակատին վուկե տառով
 Ջերմ սիրով եմ յես գրում
 Կեցցե Հայկական Գերագույն
 Խորհրդի մեծ բեկնածուն:

Այդ բեկնածուն մեծահոշակ,
 Ստալինն է պանծալի,
 Այս աշխարհում մա մեծ մարդն է,
 Յեկ ամենից սիրելին:



Այս իմ փունջը պատրաստել եմ,
 Ժողովրդի սրտից լույս
 Ստալինին, վորպես նվեր,
 Մեր սերն իրեն ցույց տալու:

Բռնակալի սուր քանկերից
 Նա ազատեց մեզ հավետ,
 Ու հայրաբար ժողովրդին
 Կյանք է տալիս ծաղկավետ:

Նոր աշխարհը իր ջանքով է
 Միրով կերտել մեզ համար,
 Նա ծով կյանք է պարգևել մեզ,
 Յերջանիկ կյանք՝ հավասար:

Ստալինի կյանքին մեռնեմ,
 Կյանքով կյանքը պարգևող,
 Նրան տեսնեմ, կարոտս առնեմ
 Մուրազս առած մտնեմ հող:

Նա հողածին մարդ է մեզ պես,
 Բայց ջերմ արև լուսավառ,
 Անմահների աշխարհից է,
 Աշխարհ յեկել մեզ համար:

Նա մարդ է պարզ, և մեծ հաննար,
 Գործով բարի, անմահ,
 Խայաթն ասեց՝ նա պիտ ապրի
 Այժմ, և միշտ հավիտյան:



ԱՇՈՒՂ ԽԱՋԱՅԻ

ՇՍ.ԳԵՏԻՐ ԱՇԽԱՐՀԻՆ...

Ընկեր ՍՏԱԼԻՆԻՆ

Շագեցիր աշխարհին քանց մի նոր արև,
 Խավար կյանքի լուսաբերը դու յես, դու.
 Ճնշված մարդկությունը նոր կյանք, նոր պարզ,
 Ժողովրդի պաշտպան տերը դու յես, դու:

Հզոր, հաստատակամ, քաջահաղթ, ուժգին,
 Վարժան դու տոկացիր բանտին, կապանքին,
 Մինչև նպատակիդ հասար քանկագին.
 Կարմրադրոշ Հոկտեմբերը դու յես, դու:

Խազային յերգում է քեզի պատվական,
 Վարժան ասեմ, արժանի յես գովական.
 Լիացրիր յերկիրը մեր սավետական,
 Աշխարհի խաղաղասերը դու յես, դու:



ԱՇՈՒՂ ԽԱԶԱՅԻ


Ա Ռ Ա Ջ Ն Ո Ր Դ

Դու հոտավետ վարդ ու ծաղիկ,
Ղեկավար ընկեր Ստալին,
Մեր աշխարհի փայլուն աստղիկ,
Քաղցրաբար ընկեր Ստալին:

Մեզ համար ամուր պողպատ ես,
Ամպեր նայթող հուր կայծակ ես,
Ուժգին բազկով քաջ էյակ ես,
Հուսարար ընկեր Ստալին:

Մարդիկ ուրախ յերգ ու ժպտով,
Ազատ, առատ հաց ու բերքով,
Զորանում են խաղ ու յերգով,
Կենարար, ընկեր Ստալին:

